

## Արտակ խաչատրյան

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի ասպիրանտ

### ԽՍՀՄ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ (ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո իշխանության եկած բոլշևիկների առաջ ծառայած մի շարք հրատապ խնդիրներ: Իշխանության գալով՝ նրանք պետք է մտածեին կառավարման նոր ուղենիշներ մշակելու և իրականացնելու մասին: Ցարական ընդարձակածավալ կայսրության կործանումը խառնաշփոթ իրավիճակ էր ստեղծել նախկին կայսրության տարածքում: Անկասկած, տեղի ունեցողը ուներ միջազգային կարևոր նշանակություն. ժամանակակիցները գիտակցում էին դա, և նշում, որ «որոշվում է հեղափոխության ճակատագիրը, որոշվում է մեր երկրի ճակատագիրը, և միևնույն ժամանակ երկար ժամանակով որոշվում է նաև մարդկության ճակատագիրը»<sup>1</sup>: Իհարկե, խնդրահարույց է բոլշևիկների իշխանության գալու փաստի հստակ բնորոշումը՝ հեղափոխություն, թե հեղաշրջում: Այս հարցի կապակցությամբ վաղուց ձևավորվել է երկու հոսանք: Համաշխարհային պատմագիտության մեջ. արևմտյան պատմագիտությունում տիրող է հոկտեմբերյան դեպքերը բնորոշել որպես հեղաշրջում, իսկ ասիա խորհրդային պատմագիտությունը ներկայացնում է նույնը՝ որպես հեղափոխություն<sup>2</sup>: Սա ժամանակին դասական մոտեցում էր, սակայն հետխորհրդային շրջանի մեջ գիտության մեջ նոր մոտեցումների և հայեցակարգերի ինտեգրացիոն գործընթացների հետևանքով կերպափոխման ենթարկվեցին նախկին դասական գիտական հարացույցեր: Վերը նշված երկու մոտեցումների կողքին վերջին շրջանում առկա է ժամանակակից ռուսաստանյան մոտեցումը, որտեղ նախախորհրդային և խորհրդային պատմության բազմաթիվ խնդիրներ լուսաբանվում են նորովի, և դրանում ամեն ինչ չէ, որ գնահատվում է միանշանակ: Եթե փորձենք բոլշևիկյան հոկտեմբերյան իրողությունը դիտարկել համաշխարհային պատմության ծիրում վերջինիս թողած ազդեցությամբ և նշանակությամբ, ապա կարելի է այն համարել հեղափոխություն: Ի վերջո, չի կարելի անտեսել այն, որ ցարական պետական համակարգը քիչ արդյունավետ էր, ինչը թույլ չէր տալիս անգամ ժամանակավոր կառավարությանը ղեկավարել երկիրը, առկա համայնապատկերն էլ լրացնում էր ընթացող Համաշխարհային առաջին պատերազմը: Բոլշևիկները հայտնվեցին ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին: Ակնբախ էր Ցարական կառավարության և ժամանակավոր կառավարության անարդյունավետ քաղաքականությունը, ուստի և բոլշևիկները հիմնվեցին հենց այդ տրամաբանության վրա՝ հռչակելով հնի իսպառ ոչնչացման և նորի կառուցման ու ներդրման մասին իրենց քաղաքականությունը՝ տուրք տալով, ըստ էության, պոպուլիզմին: Պատմությունը ցույց է տալիս, որ հեղափոխությունը ոչ թե իրադարձություն է կամ դեպք, այլ գործընթաց, որն ուղեկցվում է տարբեր փուլերով, և բնական է, որ ներպետական կառավարման հայեցակարգերը ևս կարող են փոփոխական լինել ըստ ժամանակի և պահի թելադ-

<sup>1</sup> Минц И. И., История Великого Октября. Триумфальное шествие Советской власти, М., 1969, т. 3, с. 223:

<sup>2</sup> Стѣн Боффа Джузеппе, История Советского Союза, т. 1, От революции до второй мировой войны. Ленин и Сталин. 1917-1941 гг., М., 1994, с. 52:

րանքի: Այդպես եղավ նաև Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, երբ նոր սկսված քաղաքացիական պատերազմով պայմանավորված 1918 թ. սկսեց կիրառվել ռազմական կոմունիզմի քաղաքականությունը: Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը ենթադրում էր տնտեսության կառավարման ծայրահեղ կենտրոնացում, խոշոր, միջին և նույնիսկ մանր արդյունաբերության ազգայնացում, բազմաթիվ գյուղատնտեսական մթերքների պետական մենաշնորհ, մասնավոր առևտրի արգելում և այլն: Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը շարունակվեց մինչև 1921 թ.: Այդ թվականին քաղաքացիական պատերազմը ավարտվեց, սակայն իրադրությունը երկրում ողբերգական էր: Երկիրն աղետի առաջ էր կանգնած: Այն անցել էր Առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքացիական պատերազմի դաժան իրողությունների միջով, կործանվել էին հարյուրավոր ձեռնարկություններ և բնակավայրեր: Մոտավոր հաշվարկներով ընդհանուր վնասը կազմել էր շուրջ 39 միլիարդ ռուբլի ոսկով<sup>1</sup>: 1921 թ. մարտին ՌԿ(բ)Կ X համագումարը Լենինի նախաձեռնությամբ ընդունեց որոշում ռազմական կոմունիզմի քաղաքականությունից անցում կատարել նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ): Իսկ որն էր Նոր տնտեսական քաղաքականության՝ ՆԷՊ-ի նպատակը: Դրա գլխավոր քաղաքական նպատակն էր թոթափել սոցիալական լարվածությունը, ամրակայել խորհրդային իշխանության սոցիալական բազան՝ ի դեմս աշխատավորների և գյուղացիների: Իսկ տնտեսական նպատակն էր անկման հետագա խորացման կասեցումը, տնտեսության ճգնաժամից դուրս բերելը և վերականգնելը: Իհարկե, այն նպատակ ուներ նաև կարգավորել արտաքին քաղաքական և տնտեսական հարաբերությունները, հաղթահարել արտաքին քաղաքական մեկուսացվածությունը: Նոր քաղաքականության հետևանքով երկրում թույլատրվում էր մասնավոր ձեռնարկությունների ստեղծում, իսկ որոշ գործող ձեռնարկություններ հանձնել վարձակալությամբ: Կարելի է ասել, որ ՆԷՊ-ը տնտեսաքաղաքական խոր ճգնաժամում գտնվող երկրին նոր արյուն ներարկեց:

Հենց նման ժանր իրադարձություններից անմիջապես հետո 1922 թ. դեկտեմբերին կազմավորվեց ԽՍՀՄ-ը: Այժմ արդեն իրադրությունն այլ էր. խորհրդային Ռուսաստանի փոխարեն այժմ առկա էին խորհրդային հանրապետությունները, և պետությունը պարտավոր էր հաշվեհաշու տնտեսական քաղաքականություն մշակել՝ ճկուն, միևնույն ժամանակ արդյունավետ՝ պետական վերահսկողության հստակ ընդգծվածությամբ: Սակայն բոլշևիկների տնտեսական քաղաքականությունը հանգեցրեց կոնֆլիկտային լարվածության Կենտրոնի և տարածաշրջանների միջև: Դա իշխանության երկու տարբեր կենտրոնների շահերի բախում էր 1930-ական թթ. խորհրդային պետության ներքին քաղաքական կյանքում: Մոսկովյան կուսակցական ներկայացուցիչները փորձում էին պետության դեսպոտիկ իշխանությունը կենտրոնացնել Կենտկոմի և մասնավորապես Ստալինի ձեռքում: Նրանք վերականգնավորեցին պետության ինֆրաստրուկտուրալ իշխանությունը, և ձգտում էին իրենց ձեռքում պահել երկրի ազգային անվտանգության և տնտեսական զարգացման քաղաքականության մշակման մենաշնորհը: Իսկ տարածաշրջանային լիդերների խմբավորումը ձգտում էր ստանալ պետության դեսպոտիկ իշխանության իր չափաբաժինը<sup>2</sup>: Կենտրոնի և տարածաշրջանների միջև այդ լարվածությունը 1930-ական թթ. առա-

<sup>1</sup> Տե՛ս Գոլենков А., Империя СССР. Народная сверхдержава, М., 2010, с. 33:

<sup>2</sup> Տե՛ս Իսтер Дж. М., Советское государственное строительство. Система личных связей и самоидентификация элиты в Советской России, М., 2010, с. 131:

ջին կեսին հատկապես ակնբախտեց դրսևորվեց գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականության մեջ: 1920-ական թթ. առկա էր այն մտայնությունը, որ գյուղատնտեսության կոլեկտիվացումը ազգային տնտեսական զարգացման նախագծի անհրաժեշտ բաղադրիչներից է:

Հարկ է նկատել, որ պետության ներսում կոնֆլիկտայնությունը մի քանի շերտեր ուներ: Կենտրոնի և տեղական քաղաքական լիդերների հակամարտությունից զատ՝ տեղերում առկա էին ներքին ներհակություններ, ինչը հատկապես ակներև էր բազմէթնիկ տարածաշրջաններում, որտեղ դոմինանտ էթնիկ հանրությունը պետական քաղաքականության անվան ներքո իրականացնում էին սեփական խմբին որոշակիորեն շահեկան տնտեսական քաղաքականություն: Ասվածի ակնառու վկայությունն է Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը Ադրբեջանի կողմից, երբ ինքնավար մարզի սահմանները որոշելիս կամայականորեն կտրատեցին սահմանները, որոշ մասեր կցեցին հարևան ադրբեջանական շրջաններին: Միայն արևմտյան հատվածում էր սկզբնական շրջանում մարզը սահմանակից Խորհրդային Հայաստանին: Սակայն հետագայում այս հատվածում ԼՂԻՄ-ից անջատվեցին որոշ բնակավայրեր, որի հետևանքով էլ ստեղծվեց Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև անջրպետ շերտ<sup>1</sup>: Ակնհայտ է կայսերականությանը ներհատուկ «բաժանիր և տիրիր» սկզբունքի ամրապնդումն այս գործընթացներում, որի գլխավոր թելադրողը Ռուսաստանն էր, իսկ գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ տվյալ տարածության և ժամանակի մեջ Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի պատմական շահերը համընկնում էին, և, ըստ էության, կայսերական վերոնշյալ սկզբունքը ձեռնտու էր երկու կողմին էլ: 1923 թ. ԼՂԻՄ-ի կազմավորումից հետո Ադր. ԽՍՀ-ն ձեռնամուխ եղավ այդ քաղաքականության իրականացմանը, որը նպատակ ուներ ամրակայել ԼՂԻՄ-ն իր կազմում: Հետաքրքիր է, որ Լեռնային Ղարաբաղի հարցը վճռելիս վճռորոշ դեր էր խաղացել տնտեսական գործոնը: 1921 հուլիսի 5-ին Կովկասյան բյուրոյի նիստի՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու որոշման մեջ կարդում ենք. «...Ելնելով մահմեդականների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, նրա մշտական կապից Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով, որը մտնում է ինքնավար մարզի մեջ...»<sup>2</sup>: Նախ և առաջ այստեղ աչքի է զարնում որոշման չիմնավորվածությունը և խոցելիությունը գրեթե բոլոր տեսանկյուններից: Այստեղ տնտեսական գործոնը գերակայված է մնացած բոլոր գործոններից, սակայն դրանով հանդերձ որոշման տնտեսական հիմնավորվածությունն անհամոզիչ է, քանզի Ադրբեջանի հետ «տնտեսական կապ»-ի ոչինչ չասող դարձվածը մշուշոտ է և անորոշ: Ինչ ասել է «տնտեսական կապ»՝ տնտեսական ենթակառուցվածքների ու կոմունիկատիվ համակարգերի բացակայության պայմաններում: Նաև նշվում է «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ԽՍՀ սահմաններում»՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղը երբեք Ադրբեջանի մաս չի կազմել՝ մինչև տվյալ որոշումը: Ըստ ամենայնի՝ նման ձևակերպման համար նկատի է առնվել այն հանգամանքը, որ Ղարաբաղը մաս է կազմել Ելիզավետպոլի նահանգի,

<sup>1</sup> Տես Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 6:

<sup>2</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 243:

սակայն եթե Խորհրդային Ադրբեջանը նման ձևակերպմամբ հավակնում էր Ելիզավետպոլի նահանգի իրավահաջորդ լինելուն, ապա պետք է ընդուներ դրանից բխող բոլոր հետևանքները, նաև այն, որ ժամանակին Նախիջևանի ինքնավար հանրապետությունը եղել է Երևանի նահանգի կազմում: Այնուհանդերձ, նույնիսկ եթե փորձենք հասկանալ նման տրամաբանությունը, ապա այստեղ առաջանում է նոր հարց. որքանով է կիրառելի մեկ պետության տարածքային իրավահաջորդության հավակնությունները մեկ այլ պետության վարչական միավորի նկատմամբ, քանի որ ակնհայտ է վարչական աստիճանակարգության անհամապատասխանությունը:

Հայ-ադրբեջանական հարաբերությունների խորհրդային շրջանը տարբերվում է նախորդ և հաջորդ շրջաններից իր առանձնահատկություններով: Ի տարբերություն նախորդ և հաջորդ շրջանների՝ այս շրջանում հայ-ադրբեջանական հակամարտությունը բացահայտ չէր: Առերևույթ հակամարտությունը չէր զգացվում: Չնայած դրան՝ արդեն կարելի է տեսնել արցախյան շարժման ակունքները: Այսպես. 1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի պլանումի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը անցավ Ադրբեջանին: Այդ ակտը բացասական ազդեցություն թողեց ազգային կյանքի ու տնտեսության զարգացման վրա՝ բողոքի հզոր ալիք առաջացնելով բնակչության մեջ: Այդ բողոքների արդյունքը եղավ այն, որ Լեռնային Ղարաբաղը 1923 թ. հուլիսի 7-ին հռչակվեց ինքնավար մարզ, սակայն կանխամտածված ձևով այս մարզի անվան մեջ ազգային պատկանելությունը չի նշվում, մինչդեռ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ինքնավար 8 մարզերից 7-ի անվանումներում ընդգծվում է ազգային պատկանելությունը (Հարավօսական, Խակասական, Ադիգեական և այլն)<sup>1</sup>: Կարծում ենք, որ տվյալ պարագայում ոչ այնքան մեծ էր ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների դիտավորությունը, որքան ադրբեջանական տեղական կուսակցական համակարգի ներգործությունը մարզի անվանման մեջ տվյալ ինքնավարության ազգային հատկանիշի հիշատակումը: Եթե չկար Մոսկովյան կենտրոնի դիտավորությունն այս հարցում, ապա թողտվությունն աներկբա էր, քանզի ինքնավարությունների տիտղոսների ձևակերպման վերջնական տարբերակների հաստատումը կատարվում էր Կենտկոմում: Հակված ենք կարծելու, որ հայկական ներկայության իսպառ չեզոքացման ադրբեջանական քաղաքականությունը, որն ավելի ցցուն դարձավ 1960-ականն թթ. սկսած, սկիզբ է առել հենց 1920-ական թթ. ԼՂԻՄ-ի տիտղոսի մեջ հայկական պատկանելության մատնանշումից հրաժարվելով: Այսպիսով, հայկական Արցախի տնօրինությունը սկսում են կամայականորեն իրականացնել ադրբեջանցիները: Հայկական այդ ինքնավար մարզի սահմանները որոշելիս նրանք, կանխամտածված ձևով, մարզի կազմի մեջ չեն մտցնում Արցախ-Ղարաբաղի լեռնային մասի զգալի հատվածը, դուրս է թողնվում նույնիսկ Խամսայի մելիքություններից Գյուլիստանի մելիքության ամբողջ տարածքը՝ այժմյան Շահումյանի շրջանն ու Խանլարի շրջանի, ինչպես նաև Դիզակի մելիքության զգալի մասը: Բացի դրանից ԼՂԻՄ-ի տարածքը արհեստականորեն, նեղ շերտով, (ընդամենը 6 կմ լայնությամբ) կտրվում է Հայաստանի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից: Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջև արցախյան հայկական տարածություններում Ադրբեջանը «ստեղծում է» Լաչինի, Քելբաջարի, Ղուբաթլուի, Չանգեվանի վարչական շրջանները, որտեղից հայ բնակչությունը տարբեր պատճառներով ստիպված է լինում հեռանալ:

<sup>1</sup> Տե՛ս **Մելքունյան Ս.**, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, 1997, էջ 38-39:

Այսպիսով, ԼՂԻՄ-ը, որն ընդգրկում էր Արցախի տարածքի մի հատվածը, չորս կողմից շրջափակվում է Ադրբեջանի կազմի մեջ մտցված վարչական շրջաններով և մեկուսացվում Հայաստանից: Այստեղ աչքի է զարնում նաև ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների լուռ համաձայնությունը ադրբեջանական վարչական վերածնունդներին, որի նպատակն էր և բաժանել, մեկուսացնել մեկ մշակութային ու տրնտեսական ամբողջությունը ներկայացնող Ղարաբաղի հայությանը: Նման թողտվությունը կայսերականության բնորոշիչ հատկանիշներից է, որից չէին խորշում օգտվել բուլղարները Այստեղ, իհարկե, կարևոր է սահմանի կայացման քաղաքական ասպեկտը, բայց մեզ ավելի հետաքրքրում է սահմանի հարցը սոցիալական և մշակութային տեսանկյունից որպես տարբեր խմբերի միջև միջնորմներ: Ընդ որում, որոշ դեպքում կարևոր է եղել ոչ թե դրանց առաջացման, այլ գործառույթյան խնդիրը<sup>1</sup>: Հետաքրքիր է սահմանների գոյացման պրոցեսը: Միջհանրապետական սահմանը գոյանում է նույն սկզբունքով, որով գոյանում էին միջգյուղային, միջշրջանային սահմանները: Վերջինները ներդրվեցին 1930-ական թթ., այսինքն՝ գյուղերի և հանրապետությունների միջև սահմաններ որոշելուց ավելի ուշ: Շրջանացումը նախապատրաստող և հրահանգավորող գրականությունից պարզ է դառնում, որ ազգային հանրապետությունների վարչական բաժանումը շրջանների հիմնվում էր տնտեսական նպատակահարմարության սկզբունքին: Հատուկ ընդգծվում էր, որ «տնտեսական շրջանացումը միանգամայն ապահովում է ինչպես առանձին ազգությունների ինքնորոշման հնարավորությունը, այնպես էլ կենտրոնացված պլանային ղեկավարումը»<sup>2</sup>: Այսպիսով, նախկին ԽՍՀՄ-ի ներսում ի սկզբանե չկար «սահմանների անձեռնմխելիություն»: Միջհանրապետական սահմանը չունեի պետական սահմանների բնորոշ հատկանիշներ: Հանրապետությունը, չնայած «տիտղոսային» իմաստով ազգային էր, սակայն սահմանները պայմանական էին, որոնք ոչ ոք չէր կարող էին փոխվել նույն տնտեսական նկատառումներով: Այսինքն՝ խորհրդային ղեկավարությունը հեռահար նպատակով ստեղծում էր սահմանների ոչ կայուն, փոփոխելի ներուճակություն, և դա օգտագործելու էր անհրաժեշտության դեպքում՝ կենտրոնի իշխանական մեխանիզմներն արդյունավետորեն գործարկելու մտայնությամբ:

Փաստերը խոսում են ոչ այնքան ԽՍՀՄ երկու հանրապետությունների միջև սահմանների «վիճելիության» մասին, որքան դրանց հատուկ բնույթի: Ի տարբերություն ԽՍՀՄ պետական սահմանների (օրինակ՝ Չինաստանի և Ճապոնիայի հետ), որոնք համարվում էին անձեռնմխելի, միջհանրապետական սահմանագծերը հեշտությամբ տեղաշարժվում էին, եթե ներկայացվեր համապատասխան տնտեսական հիմնավորում: Դրանք թափանցիկ սահմաններ էին, որ կարող էին «ազգայնացվել» միայն խորհրդանշորեն, ցանկալի էր տնտեսական հիմնավորմամբ: Նման մոդելի կիրառման համար պետք չէ հեռու գնալ, այն տեսանելի է արդեն վերը նշված 1921 թ. հուլիսի 5-ի՝ Արցախն Ադրբեջանին բռնակցելու որոշման մեջ, որտեղ խոսվում էր տրնտեսական նպատակահարմարության մասին: Լեռնային Ղարաբաղն իր կազմի մեջ ընդգրկելուց հետո Ադրբեջանը միշտ էլ խտրական քաղաքականություն է վարել նրա նկատմամբ: Մասնավորապես նկատվում էր հայկական բնակչության արտահոսքը մարզից: Ադրբեջանը վարում էր հատուկ տնտեսական քաղաքականություն,

<sup>1</sup> Տե՛ս **Ղաբաղյան Ա., Գաբրիելյան Մ.**, Տնտեսությունը, առևտուրը և էթնիկությունը սահմանամերձ գոտում. ազգագրական հետազոտություն Հայաստանի Տավուշի մարզում, Երևան, 2008, էջ 8:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 24:

ինչի հետևանքով շնորհիվ արտագաղթի նվազում էր մարզի հայ բնակչության տոկոսային հարաբերությունը, դրան հակառակ կատարվում էր ադրբեջանական բնակչության ներհոսք Լեռնային Ղարաբաղ: Լեռնային Ղարաբաղի էթնոժողովրդագրական պատկերի նկարագիրը խորհրդային շրջանում դիտարկելիս միանգամից աչքի է զարնում հայկական բնակչության տեսակարար կշռի նվազումը ամբողջ ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում: Եվ այդ գործընթացը կրում էր շարունակական բնույթ, որը կասեցվեց արցախյան շարժման նոր վերելքով: Այսպես, 1926-79 թթ. հայերի թիվն աճեց 10.2 %-ով, այն դեպքում, երբ բնական աճի տեմպերի հետ ադրբեջանական բնակչությունն աճեց շուրջ 3 անգամ: Եվ եթե 1923 թ. հայերի տեսակարար կշիռը Լեռնային Ղարաբաղում կազմում էր 94.4 % ընդհանուր բնակչության հաշվեկշռում, ապա 1979 թ. մարդահամարի տվյալները կազմում էր ընդամենը 75.9 %<sup>1</sup>: Այսպիսով, 1926 և 1979 թթ. մարդահամարի միջև ընկած ժամանակահատվածում ԼՂԻՄ-ի հայկական բնակչության թիվը աճեց ընդամենը 11,4%-ով, իսկ ադրբեջանականինը՝ 24,7 %-ով: Վերը նշված 11,4 % աճի առյուծի բաժինը հասնում է 1926-1939 թթ., որքանով որ հետպատերազմյան տարիներին կամ ավելի ճիշտ՝ 1939-1979 թթ., հայերի արտահոսքի հետևանքով տեղի հայ բնակչության թիվը պակասեց 10000 մարդով: Հետաքրքիրն այն է, որ մինչև Երկրորդ աշխարհամարտի սկիզբը ԼՂԻՄ-ի հայ բնակչության բնական աճն ավելի բարձր էր, քան ադրբեջանցիներինը, և միայն հետպատերազմական տարիներին այդ ցուցանիշը հօգուտ ադրբեջանցիների էր և ի վնաս հայերի: Ժողովրդագրական նման տեղաշարժերի հիմնական պատճառներից մեկը տնտեսական գործոնն էր, որը, թերևս, ամենահիմնականն էր: Ադրբեջանի ստեղծած արհեստական պայմանները տնտեսության ոլորտում հարկադրում էին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը դիմել արտագաղթի՝ դրսում ավելի լավ վարձատրվող աշխատանք գտնելու միտումով: Արտագաղթի դիմողների հիմնական մասը գյուղացիներ էին: Լեռնային Ղարաբաղում նկատվում էր գյուղական բնակչության շարունակական նվազում՝ ի հաշիվ հայկական բնակչության արտագաղթի: 1923-1979 թթ. կտրվածքով մարզի գյուղական բնակչությունը նվազեց 61,3 հազար մարդով<sup>2</sup>: Այս շրջանում վերացվեցին մի քանի տասնյակ հայկական գյուղեր: Միևնույն ժամանակ անշեղորեն աճում էր մարզի ադրբեջանական գյուղական բնակչության թվաքանակը: Ժողովրդագրական զարգացման միտումները ընդհանուր առմամբ հանդիսանում էին սոցիալ-տնտեսական և մշակութային առաջընթացի արտահայտություն: Այստեղ առկա է հետաքրքիր մի առանձնահատկություն: Այս ամենով հանդերձ Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Ադր. ԽՍՀ-ի մյուս շրջաններում, որտեղ բնակվում էին հայեր, կուտակվել էին բազմաթիվ չորոշված ազգային խնդիրներ, որոնք էլ իրենց հերթին, արտացոլվում էին սոցիալ-տնտեսական զարգացման մեջ այս շրջաններում, մասնավորապես ԼՂԻՄ-ում: Համարձակորեն կարելի է ասել, որ ԼՂԻՄ-ում Ադր. ԽՍՀ-ի կողմից վարվող քաղաքականությունը ազգային քաղաքականության մի մասն էր, որի նպատակն էր հայոց իրավունքների անտեսումը, նրանց մարզից աստիճանական արտամղումը: Հենց այս քաղաքականության արտահայտություններից մեկն այն էր, որ լիովին կամ գրեթե նորմալ չէր օգտագործվում ինքնավար մարզի աշխատանքային ռեսուրսը: Այն դեպքում, երբ Լեռնային Ղարաբաղը միշտ էլ առանձնացել է բնակչության բարձր կրթվածության մակար-

<sup>1</sup> Տե՛ս Нагорный Карабах, Историческая справка, Ереван, 1988, ст. 45.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 47:

դակով: Ղարաբաղից դուրս եկած բարձրակարգ կադրերը հաջողությամբ աշխատում էին ԽՍՀՄ-ի տնտեսության ամենատարբեր ճյուղերում: Սակայն նրանց աշխատանքը և փորձը հայրենի մարզի զարգացման մեջ դնելու հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Այս ամենը հետզհետե վատթարացնում էր մարզի ընդհանուր վիճակը: Ամենասուկալին այն էր, որ տեղի էր ունենում բնակչության աստիճանական ծերացում: Երիտասարդության մեծ մասը կրթություն ստանալու նպատակով դուրս գալով Ղարաբաղից՝ հայրենի մարզում աշխատանքային տեղերի սակավության կամ գրեթե չգոյության պայմաններում, հնարավորություն չէին ունենում վերադառնալ և մասնագիտական փորձը ներդնել Լեռնային Ղարաբաղում: Եվ, հետևաբար, քանի որ երիտասարդությունը լքում էր երկրամասը, հատկապես կրճատվում էր դպրոցների թիվը, նաև դրանցում սովորողների թվաքանակը: Խորհրդային շրջանում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունն առավելապես ուներ ագրարային բնութագիր: ԼՂԻՄ արդյունաբերությունը ներկայացված էր մի քանի տասնյակ ձեռնարկություններով, որոնք առավելապես հմտացած էին կոնյակի և գինու, նաև բրդի ու բրդյա կտորեղենի արտադրության ոլորտում, որը հիմնադրվել էր դեռևս մինչ խորհրդային շրջանը: Կար նաև կոշիկի, կահույքի, շինանյութի, լուսավորող սարքավորումների արտադրություն: Որևէ լուրջ առաջընթաց քայլ արդյունաբերության ոլորտում չէր կատարվում: Այս քաղաքականությունն ուներ իր նրբորեն քողարկված իրավանպատակները: Հիմնական նպատակն էր հայաթափել Լեռնային Ղարաբաղը, որը լուրջ ազդեցություն էր թողնում մարզի բնակչության էթնոմշակութային նկարագրի վրա, խաթարում մարզի էթնիկ խճանկարն ի վնաս հայության: Որպես լծակ օգտագործվում էր տնտեսական գործոնը: Տնտեսական առումով հարուստ Լեռնային Ղարաբաղը դարձել էր Ադրբեջանին գյուղատնտեսական հումք (հացահատիկ, միս, կաթ, բուրդ, բոժոժ, ձու, խաղող, պտուղներ, բանջարեղեն) մատակարարող խոշոր բազա<sup>1</sup>: Թույլ չէր տրվում մարզում կառուցել գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկություններ: Իսկ նման ձեռնարկությունների առկայությունը կկանխեր հայ բնակչության նման արտահոսք մարզից, կլուծեր զբաղվածության խնդիրը: Այսպիսով, մարզը թեև գյուղատնտեսական հումքի խոշոր արտադրող էր, բայց բնակչությունը հնարավորություն չունեի տեղի խանութներից գնելու սննդամթերք, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանք<sup>2</sup>: Նրանք դժվարությամբ այդ արտադրանքը ձեռք էին բերում այլ վայրերից, հատկապես Յայաստանից:

Հարկ է նշել, որ մարզում շինարարական աշխատանքները նույնպես բարձիթողի վիճակում էին: Կանխամտածված ձևով անուշադրության էր մատնված հատկապես ճանապարհաշինությունը: Իսկ եղած տրանսպորտային կապը այնպես էր պլանավորված, որ դրսից Ղարաբաղի ցանկացած բնակավայր գնալու համար անպայման պետք էր անցնել նրա սահմանի ամբողջ երկայնքով տեղադրված ադրբեջանաբնակ քաղաքներով՝ Աղդամով, Միր-Բաշիրով, Ֆիզուլիով, Լաչինով: 1988 թ. իրադարձությունները ցույց տվեցին, որ ադրբեջանական գաղութարարների այդ հեռահար քաղաքականությունը կանխամտածված է եղել: Դրանով նրանք ցանկացած ժամանակ կարող էին տնտեսական մեկուսացման ենթարկել Արցախը: Խորհրդային շրջանում Ադրբեջանի հայկական քաղաքականության հետևանքով ԼՂԻՄ-ի տնտեսությունը զարգացել է միակողմանի: Մարզի սոցիալական զարգացմանն ու մշակութային

<sup>1</sup> Տես **Մելքունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 7:

<sup>2</sup> Նույն տեղում:

կյանքին ուշադրություն չի դարձվել: Ունահարվել է հայ բնակչության ազգային արժանապատվությունը, հայկական մշակույթը, պատմաճարտարապետական արժեքները, զանազան կեղծարարությամբ դրանց մի մասը համարվել է ադրբեջանական, ինչն էլ որ հնարավոր չի եղել սեփականացնել՝ ոչնչացվել է: Մինչև 1980-ական թթ. վերջերը մարզի արդյունաբերությունը, երկրի մյուս տարածաշրջանների համեմատ, ավելի թույլ էր ու կառուցվածքային տեսակետից՝ անկատար: Գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները կենտրոնացված էին Ստեփանակերտում և Շուշիում: Այդ ձեռնարկությունների գործունեությունն այնպես էր կազմակերպվում, որ թաքցվեր արտադրանքի հայկական բնույթը: Դրա փաստերից մեկն էլ այն է, որ նախկին ԽՍՀՄ-ում հայտնի Ղարմետաքս կոմբինատի արտադրական ցիկլի վերջին օղակը՝ ներկման արտադրամասը, կանխամտորեն, խորմանկորեն փակվել էր վաղուց:<sup>1</sup> Մարզում արտադրված միլիոնավոր գծամետր գործվածքեղենը, որպես կիսաֆաբրիկատ, ուղարկվում էր Ադրբեջանի Շաքիի մետաքսի ֆաբրիկա՝ ներկելու համար: Այսպիսով, արտադրանքը թողարկվում էր Ստեփանակերտում, սակայն ներկվում էր Շաքիում և նրանց անունով ու մակնիշով հանձնվում սպառողին որպես պատրաստի արտադրանք: Այսինքն այս կերպ փորձ էր արվում նույնիսկ այս ոլորտում չհիշատակել Ղարաբաղ անունը:

Այսպիսով, ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը նպատակ ուներ ամենատարբեր մեթոդների կիրառման միջոցով պահպանել ներքին որոշակի կայունություն, ապահովել Կենտրոնի ազդեցությունը և ներկայությունը բոլոր տարածաշրջաններում: Տնտեսական քաղաքականությունը հատկապես խնդրահարույց էր դառնում բազմէթնիկ մարզերում, մասնավորապես Անդրկովկասում: ԼՂԻՄ-ի նկատմամբ, կարելի է ասել, տարվում էր երկիմաստ քաղաքականություն: Այն ներառված էր ԽՍՀՄ ինքնավար մարզերի շարքում և ենթարկվում էր Կենտրոնի տնտեսական քաղաքականությանը, սակայն միևնույն ժամանակ ադրբեջանական իշխանությունները վարում էին խտրական քաղաքականություն մարզի հայկական բնակչության նկատմամբ՝ օգտագործելով նաև տնտեսական գործոնը և զանազան տնտեսական հիմնավորումներով խաթարելով մարզի հայկականության ընդհանուր պատկերը: Քսաներորդ հարյուրամյակի վերջում ծավալված արցախյան շարժումը հետևանք էր ոչ միայն Ադր. ԽՍՀ-ի տնտեսական քաղաքականության, այլև հենց ԽՍՀՄ -ի թուլատրվող, հաճախ անտեսվող, երբեմն էլ ներքուստ խրախուսվող ադրբեջանական պետական քաղաքականության:

*Артак Хачатрян, Теоретические основы национальной политики СССР (на примере НКР), - В статье анализируется экономическая составляющая национальной политики СССР, предпосылки ее становления и последствия применения. Предпринята попытка вскрыть двоякую суть проводимой в отношении НКАО экономической политики. Официально в отношении НКАО проводилась провозглашаемая Москвой экономическая политика, однако на деле армянское население области подвергалось дискриминации со стороны местных азербайджанских властей. Для искажения общей картины местного армянского населения помимо общетеоретических экономи-*

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 284:



ческих обоснований, азербайджанскими властями активно использовались также экономические рычаги давления.

*Artak Khachatryan, The economic "grounds" of national policy of the USSR (by Nagorno Karabach example),* - This article analyses one of important aspects of national policy of USSR, the economic policy, its causes and consequences. It is shown, that economical policy in South Caucasus and particularly towards *NKAR* was two-ply. That is, officially *NKAR* was subject to economical policy of Moscow, but meantime Azeri government was conducting a policy of discrimination towards Armenian population of the region. They used economic factor and by different economic justifications tried to distort overall picture of Artsakh *Armenianism*.

